МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
УНИВЕРСИТЕТ

THE MINISTRY OF EDUCATION,
SCIENCE, CULTURE AND SPORT
REPUBLIC OF ARMENIA
YEREVAN STATE UNIVERSITY

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian st., Yerevan, 0025, Republic of Armenia
(+374 10) 55-47-52 (+374 10) 55-46-41 (Fax), info@vsu.am, www.vsu.am

13 Հոկտեմբեր, 2025

«ՄՈՆՈՊՐԻՆՏ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ ԱՐՄԵՆ ԱՐՄԵՆԱԿՅԱՆԻՆ
(ՀՎՀՀ՝ 01844711,
հասցե՝ «ՀՀ, ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա Անդրանիկի փ. 96 8բն»,
էլ.փոստ՝ «monoprint1@mail.ru»)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի՛ պարոն Արմենակյան,

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կողմից 2025 թվականի մայիսի 19-ին տեղեկագրում (www.gnumner.am) հրապարակվել է ԵՊՀ կարիքների համար տպագրական աշխատանքների ձեռքբերման «ԵՊՀ-ԷԱՃԱՇՁԲ-25/129» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ի թիվս այլ մասնակիցների Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացվել նաև «Մոնոպրինտ» ՍՊ ընկերության կողմից (ՀՎՀՀ՝ 01844711, այսուհետ՝ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2-րդ նիստի արձանագրության 9-րդ կետով Ընկերությունը Ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, իսկ 2025 թվականի հունիսի 24-ին ԵՊՀ և Ընկերության միջև կնքվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՇՁԲ-25/129-1» ծածկագրով պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Կնքված Պայմանագրի աշխատանքի կատարման ժամանակացույցի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրի կնքման օրվանից հաշված 37 օրացուցային օրվա ընթացքում աշխատանքի կատարում իրականացնել, սակայն Պայմանագրով նախատեսված աշխատանքները մինչ օրս պատշաճ ձևով չեն կատարվել:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն «Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը», իսկ 2.1.3 կետի ա) ենթակետի համաձայն «Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060-71-00-10

համարվում, եթե կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 և/կամ N 2 հավելվածով սահմանված պահանջներին», ինչպես նաև բ) ենթակետի համաձայն, «եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը»: :

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե «**խախտել է պայմանագրով նախատեսված** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը **հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և **մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը**», ուստի Ընկերությունը Ընթացակարգի շրջանակներում ներկայացրած ապահովումները վճարելու պարագայում վերոնշյալ ցուցակում չի ընդգրկվի:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ԵՊՀ-ն որոշել է պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՐԵԿՏՈՐ Ա. Գ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Կատ.՝ Գնումների կազմակերպման վարչություն
Հեռ.՝ 060-71-00-10